

Համայնքի տարածքում որոշակի բույսերի, բուսական ապրանքների կամ այլ պարագաների տեղաշարժման համար օգտագործվող բուսասանիտարական անձնագրերի ստանդարտացման աստիճան, նման բուսասանիտարական անձնագրերի տրամադրման հետ կապված մանրամասն ընթացակարգեր եւ դրանց տեղափոխման համար պայմաններ ու մանրամասն ընթացակարգեր սահմանող՝ Հանձնաժողովի 1992 թվականի դեկտեմբերի 3-ի 92/105/ԵՏՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր L 004, 08.01.1993թ., էջ 0022-0025

Ֆիններեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 47, էջ 0181

Շվեդերեն հատուկ հրատարակություն. Գլուխ 3, հատոր 47, էջ 0181

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Հանձնաժողովի 92/10/ԵՏՀ հրահանգով՝ վերջին անգամ փոփոխված՝ Խորհրդի «Բույսերի կամ բուսական ապրանքների համար վնասակար օրգանիզմները Համայնք ներկրելուց եւ Համայնքում դրանց տարածումից պաշտպանիչ միջոցառումների մասին» 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը² եւ, մասնավորապես, դրա 2 (1) (գ) հոդվածի երկրորդ ենթապարբերությունն ու 10 (4) հոդվածը,

քանի որ Համայնքի բույսերի առողջապահական համակարգի կիրառումը Համայնքում՝ որպես առանց ներքին սահմանների տարածք, կպահանջի

¹ ՊՏ թիվ L 70, 17.03.1992թ., էջ 27:

² ՊՏ թիվ L 26, 31.01.1977թ., էջ 20:

Համայնքի՝ հնարավոր վտանգավոր ապրանքների ստուգումների անցկացում՝ նախքան դրանց տեղաշարժը Համայնքի տարածքում. քանի որ այս ստուգումների անցկացման ամենահարմար վայրը պաշտոնական ռեգիստրում նշված արտադրողների արտադրության վայրն է,

քանի որ, եթե այս ստուգումների արդյունքը բավարար է, ապա միջազգային առետրում օգտագործվող բուսասանիտարական հավաստագրի փոխարեն բույսերին, դրանց փաթեթվածքներին կամ դրանք փոխադրող փոխադրամիջոցին պետք է կցվի ապրանքին համապատասխանեցված բուսասանիտարական անձնագիր՝ Համայնքի տարածքում ազատ տեղաշարժ ապահովելու նպատակով դրա կամ դրա այն մասերի համար, որոնց առումով այն վավերական է,

քանի որ Համայնքից դուրս առաջացող այն բույսերի, ինչպես նաև Համայնքից դուրս արտադրվող բուսական ապրանքների կամ այլ պարագաների դեպքում, որոնք առաջին անգամ Համայնք ներմուծվելիս հաջողությամբ անցել են բույսերի առողջության հետ կապված անհրաժեշտ ստուգումներ, բուսասանիտարական անձնագիրը նույնպես պետք է միեւնույն նպատակով կցվի,

քանի որ բույսերի կամ բուսական ապրանքների տարբեր տեսակների համար անհրաժեշտ է նախատեսել ստանդարտացված ծրագիր,

քանի որ, այնուամենայնիվ, նախնական փուլում ստանդարտացման աստիճանով բուսասանիտարական պարզեցված անձնագրից օգտվելու համակարգը պետք է օգտագործվի՝ 1993 թվականի հունվարի 1-ից հնարավոր դարձնելու համար բույսերի, բուսական ապրանքների կամ այլ պարագաների տեղաշարժը. քանի որ նշված փուլում կատարված գնահատման հիման վրա այս համակարգը վերանայվում է,

քանի որ այն դեպքում, երբ մեկ բուսասանիտարական անձնագիրը փոխարինվում է մյուսով, փոխարինվող անձնագրի համար պետք է սահմանվի հատուկ նշան,

քանի որ անդամ պետությունների կողմից բույսերի, բուսական ապրանքների կամ այլ պարագաների պատշաճ դիտանցումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանել ավելի մանրամասն եւ միասնական ընթացակարգեր՝ բուսասանիտարական անձնագրի տրամադրման ու փոխարինման համար,

եւ քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի կարծիքին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Անդամ պետություններն ապահովում են 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանների բավարարումն այն ժամանակ, երբ Խորհրդի 77/93/ԵՏՀ հրահանգի 2 (1) (գ) հոդվածի առաջին ենթապարբերության մեջ նշված բուսասանիտարական անձնագիրը պատրաստվում է իրենց պաշտոնական պատասխանատու մարմինների կողմից՝ սույն Հրահանգի 2-րդ եւ 3-րդ հոդվածների դրույթների համաձայն օգտագործվելու նպատակով:

2. Անհրաժեշտ է բավարարել հետեւյալ պայմանները՝

ա) բուսասանիտարական անձնագիրը բաղկացած է պաշտոնական պիտակից եւ դրան կցված փաստաթղթից, որը պարունակում է սույն Հրահանգի հավելվածով սահմանված՝ պահանջվող տեղեկությունները: Պիտակը նախկինում չպետք է օգտագործված լինի եւ պետք է պատրաստված լինի համապատասխան նյութից: Թույլատրվում է պաշտոնական սոսնձվող պիտակների օգտագործումը: «Կցված փաստաթուղթը» նշանակում է ցանկացած այնպիսի փաստաթուղթ, որը սովորաբար օգտագործվում է առետրային նպատակներով: Այս փաստաթուղթն անհրաժեշտ չէ այն դեպքում, երբ հավելվածում սահմանված պահանջվող տեղեկությունը նշված է վերոնշյալ պիտակի վրա,

բ) նախընտրելի է, որ պահանջվող տեղեկությունը տպվի եւ լինի Համայնքի առնվազն մեկ պաշտոնական լեզվով,

գ) տնկելու համար նախատեսված կարտոֆիլի պալարապտուղների բուսասանիտարական անձնագրի դեպքում օգտագործվում է Խորհրդի 66/403/ԵՏՀ հրահանգում³ նշված պաշտոնական պիտակը: Սերմացու կարտոֆիլի հետ կապված վնասակար օրգանիզմների առումով որպես պաշտպանված գոտի ճանաչված տարածքում կարտոֆիլի ներմուծումը եւ տեղաշարժը վերահսկող դրույթների հետ համապատասխանությունը նշվում է պիտակի կամ որեւիցե այլ առետրային փաստաթղթի վրա:

3. Անդամ պետությունները պահանջում են, որ այն դեպքում, երբ բուսասանիտարական անձնագիրը բաղկացած է պիտակից եւ դրան կցված փաստաթղթից՝

ա) բուսասանիտարական անձնագրի պիտակը կազմող մասով առնվազն տրամադրվի հավելվածի 1-ին եւ 5-րդ կետերով պահանջվող մանրամասները, եւ

բ) բուսասանիտարական անձնագրի՝ կից ներկայացվող փաստաթուղթը կազմող մասով առնվազն տրամադրվում են հավելվածի 1-10-րդ կետերով պահանջվող մանրամասները:

4. Հավելվածում ընդգրկված մանրամասներից բացի՝ այն մանրամասները, որոնք առնչվում են Խորհրդի 91/682/ԵՏՀ⁴, 92/33/ԵՏՀ⁵ կամ 92/34/ԵՏՀ⁶ հրահանգների համաձայն պիտակավորման նպատակների հետ, նույնպես

³ ՊՏ թիվ L 125, 11.07.1966թ., էջ 2320/66:

⁴ ՊՏ թիվ L 376, 31.12.1991թ., էջ 21:

⁵ ՊՏ թիվ L 157, 10.06.1992թ., էջ 1:

⁶ ՊՏ թիվ L 157, 10.06.1992թ., էջ 10:

կարող են ընդգրկվել նշված կցված փաստաթղթում, բայց պետք է հստակորեն առանձնացվեն հավելվածում նշված տեղեկությունից:

Հոդված 2

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բուսասանիտարական անձնագիր կազմելիս, տպելիս եւ պահպանելիս, 2-րդ պարբերությունում սահմանված պայմանները բավարարվեն:

2. Բուսասանիտարական անձնագիրը կազմվում, տպվում եւ (կամ) հետագայում պահպանվում է անմիջականորեն 77/93/ԵՏՀ հրահանգի 1 (1) հոդվածում նշված պատասխանատու պաշտոնական մարմինների կողմից, կամ նրանց վերահսկման ներքո՝ 6 (4) հոդվածի երրորդ ենթապարբերությունում նշված արտադրողի, 10 (3) հոդվածի երկրորդ պարբերությամբ նշված անձի կամ 12 (6) հոդվածի երկրորդ ենթապարբերությունում նշված ներմուծողի կողմից:

Հոդված 3

1. Անդամ պետություններն ապահովում են, որ բուսասանիտարական անձնագիր տրամադրելիս եւ այն բույսերին, բուսական ապրանքներին կամ մյուս պարագաներին, դրանց փաթեթվածքին կամ դրանք փոխադրող փոխադրամիջոցին կցելիս, բավարարվեն 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանները:

Անձնագրի տրամադրումը ներառում է անձնագրի պատրաստում, մասնավորապես՝ տեղեկությունների լրացում, ինչպես նաեւ հայտատուի համար անձնագրից օգտվելը հասանելի դարձնելու նպատակով անհրաժեշտ գործառույթների կատարում:

2. 1-ին պարբերության նպատակով, 1 (1) հոդվածում նշված պաշտոնական պատասխանատու մարմինները, չհակասելով 77/93/ԵՏՀ հրահանգում սահմանված պահանջներին՝

ա) ապահովում են, որ 2 (2) հոդվածում նշված արտադրողը, անձը կամ ներմուծողը կիրառի դրանք բուսասանիտարական անձնագրի տրամադրման, ինչպես նաև բուսասանիտարական անձնագրի փոխարինման նպատակով.

բ) անհրաժեշտության դեպքում, 77/93/ԵՏՀ հրահանգի 6 (1) (2) եւ (3) հոդվածներով նախատեսված ու 6 (4) հոդվածի համաձայն իրականացվող ուսումնասիրությունների հիման վրա կամ նշված հրահանգի 6 (4) հոդվածում սահմանված պահանջների հիման վրա որոշում են բույսերի, բուսական ապրանքների կամ այլ պարագաների նկատմամբ կիրառվող սահմանափակումները եւ, համապատասխանաբար, տարածքային այն սահմանները, որտեղ բուսասանիտարական անձնագիրը վավեր է, կամ որոշում են կայացնում նշված բուսասանիտարական անձնագրի փոխարինման մասին, ինչպես նաև որոշում են այն տեղեկությունները, որոնք պետք է լրացվեն:

Եթե 2 (2) հոդվածում նշված արտադրողը, անձը կամ ներմուծողը նպատակադրված է առաքելու բույսը, բուսական ապրանքը կամ մյուս պարագան տվյալ հրահանգի 2 (1) (ը) հոդվածում նշված պաշտպանված գոտի, որի համար նա չունի վավեր բուսասանիտարական անձնագիր, ապա նշված պատասխանատու պաշտոնական մարմիններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում եւ, համապատասխանաբար, որոշում կայացնում, թե արդյոք ապրանքը համապատասխանում է տվյալ պաշտպանված գոտում ընդգրկվելու պահանջներին: Նշված պատասխանատու պաշտոնական մարմիններն ապահովում են, որ 2 (2) հոդվածում նշված արտադրողը, անձը կամ ներմուծողը առաքումից առաջ պատշաճ ժամկետում տեղեկացնի իր վերոնշյալ մտադրության մասին եւ միաժամանակ համապատասխան բուսասանիտարական անձնագիր ստանալու համար դիմում ներկայացնի.

գ) ապահովում են, որ տեղեկությունը լրացվի ամբողջությամբ մեծատառերով այն դեպքում, երբ բուսասանիտարական անձնագիրը նախապես տպված է, կամ մեծատառերով կամ մեքենագրված մնացած բոլոր դեպքերում, Բույսերի կամ բուսական ապրանքների բուսաբանական անվանումը նշվում է լատիներեն տառերով, չհաստատված փոփոխությունները կամ ջնջումներն անվավեր են դարձնում նշված բուսասանիտարական անձնագիրը.

դ) ապահովում են, որ եթե բույսի, բուսական ապրանքի կամ այլ պարագայի մասով տրվել է որոշակի պաշտպանված գոտում (գոտիներում) ընդգրկվելու թույլտվություն, ապա պաշտպանված գոտու (գոտիների) կողը նշվում է բուսասանիտարական անձնագրում 'ZP' (zona protecta) տարբերանշանի դիմաց՝ ցույց տալով, որ նշված բուսասանիտարական անձնագիրը պատկանում է տվյալ պաշտպանված գոտում (գոտիներում) ներառվելու պահանջներին համապատասխանող բույսին, բուսական ապրանքին կամ մյուս պարագային.

ե) ապահովում են, որ եթե բուսասանիտարական անձնագիրը տրվում է Համայնքից դուրս առաջացած բույսի, բուսական ապրանքի կամ այլ պարագայի համար, ապա բուսասանիտարական անձնագիրն օգտագործվի՝ դրա մեջ նշելով ծագման երկրի կամ, համապատասխան դեպքում՝ բեռնառաքող երկրի անվանումը.

զ) ապահովում են, որ եթե առկա է տվյալ բուսասանիտարական անձնագիրը այլ բուսասանիտարական անձնագրով փոխարինելու անհրաժեշտություն, ապա օգտագործվի 1 (1) հոդվածում նշված բուսասանիտարական անձնագիրը. նշված բուսասանիտարական անձնագրում նշվում է ի սկզբանե գրանցված արտադրողի կամ ներմուծողի կողը 'RP' ('replacement passport') տարբերանշանի մոտ՝ ցույց տալով, որ նշված բուսասանիտարական անձնագիրը փոխարինում է մյուս բուսասանիտարական անձնագրին.

է) կախված նրանից, թե նշված բուսասանիտարական անձնագիրը որտեղ է ֆիզիկապես պահվում, տրամադրում են նշված բուսասանիտարական

անձնագիրը կամ թույլատրում են 2 (2) հոդվածում նշված արտադրողին, անձին կամ ներմուծողին համապատասխանաբար օգտագործել այն.

ը) ապահովում են, որ նշված բուսասանիտարական անձնագրի պիտակը կազմող մասը 2 (2) հոդվածում նշված արտադրողի, անձնագրի կամ ներմուծողի պատասխանատվության ներքո կցվի բույսերին, բուսական ապրանքներին կամ մյուս պարագաներին, դրանց փաթեթվածքին կամ դրանք փոխադրող փոխադրամիջոցներին այնպես, որ հնարավոր չլինի այն նորից օգտագործել:

Հոդված 4

Այն համակարգը, որի համաձայն 1 (1) հոդվածում նշված բուսասանիտարական անձնագիրն օգտագործվում է, պետք է վերանայվի 1994 թվականի հունիսի 30-ից ոչ ուշ:

1 (2) (գ) հոդվածում նշված բուսասանիտարական անձնագրի օգտագործման ժամկետն ավարտվում է 1993 թվականի հունիսի 30-ին:

Հոդված 5

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելուն ուղղված անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը կամ վարչական ակտերը Խորհրդի 91/683/ԵՏ⁷ հրահանգի 3 (1) հոդվածում նշված ամսաթվին: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

⁷ ՊՏ թիվ L 376, 31.12.1991թ., էջ 29:

2. Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են ներպետական իրավունքի բոլոր այն դրույթների մասին, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի դեկտեմբերի 30-ին: Հանձնաժողովի կողմից՝

Ռեյ ՄԱԿ ՇԱՐԻ

Հանձնաժողովի անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «ԵՏՀ բուսասանիտարական անձնագիր».
2. ԵՀ անդամ պետության կողմի նշում.
3. Նշում պաշտոնական պատասխանատու մարմնի մասին կամ նրա տարբերակիչ կոդը.
4. Գրանցման համարը.
5. Անհատական սերիայի, կամ խմբաքանակի համարը,
6. Բուսաբանական անվանումը,
7. Քանակը,
8. 'ZP' տարբերանշանը անձնագրի տարածքային այն սահմանների համար, որտեղ անձնագիրը վավեր է եւ, համապատասխան դեպքում, այն պաշտպանված գոտու (գոտիների) անվանումը, որի պահանջներին ապրանքը համապատասխանում է.
9. 'RP' տարբերանշանը բուսասանիտարական անձնագրի փոխարինման դեպքում եւ, անհրաժեշտության դեպքում, ի սկզբանե գրանցված արտադրողի կամ ներմուծողի կոդը.
10. Ըստ անհրաժեշտության, ծագման երկրի կամ բեռնառաքող երկրի անվանումը՝ երրորդ երկրների համար նախատեսված ապրանքների համար: